# ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԸ, ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՎ Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԴԱՍԻ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Հուլիսի 9-ին, կեսօրից հետո, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի և եպիսկոպոսաց դասի հետ մեկտեղ այցելեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Վազգեն Սարգսյանին:

Փոխանցելով իր ցավակցությունները Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանման կապակցությամբ, ՀՀ վարչապետը նշեց, որ Վեհափառ Հայրապետի կորստյան վիշտը համայն հայության և առավելապես Մայր եկեղեցու վիշտն է:

Հանդիպման ընթացքում խոսվեց եկեղեցի-պետություն հարաբերությունների շուրջ՝ փոխադարձ աջակցության և համագործակցության ակնկալիքներով:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*